

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
Մ Ո Ն Թ Ր Է Ա Լ

Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ռ Թ Ի Ռ Ն
ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
12 ՓԵՏՐՈՒԱՐ 1978

Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ն

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՑ

Մ Ո Ն Թ Ր Է Ա Լ

Յամի Տեառն Փետրուար 12, 1978

Տարեկան Անդամական ընդհանուր ժողովս տեղի ունեցաւ Կիրակի 12 Փետրուար 1978, ժամը 15.30-ին, Եկեղեցւոյս Մարի Մանուկեան սրահին մէջ: Նախագահութեամբ Հոգեւոր Հովիւ՝ Հոգ. Տ. Պարէտ Կրդ. Երէցեանի, եւ ի ներկայութեան 102 -հարիւր եւ երկու- տրատու անդամներու եւ բազմաթիւ ունկնդիր ազգայիններու:

Ժխական Խորհուրդի ատենապետ Պրն. Արթո Պասմանեան, բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ ապա հրաւիրեց Հոգեւոր Նախագահը կատարելու ժողովիս բացումը իր աղօթքով:

Յետ ստուգման անդամներու վաւերականութիւնը, օրուան դիւանի ատենապետ ընտրուեցաւ՝ Տոքթ. Արշալիր Կէօնմեան, իսկ ատենադպիրներ՝ Տիկ. Սրբուհի Տէր Օհաննէսեան եւ Պրն. Ժիրայր Այվատեան:

Նորընտիր ատենապետը, Մայր Դիւանի անունով շնորհակալութիւն յայտնեց, իրենց նկատմամբ ցուցաբերուած վստահութեան եւ անմիջապէս ձեռնարկեց օրակարգի Յրդ յօդուածին զործադրութեան: Հրաւիրեց Տիկ. Սրբուհի Տէր Օհաննէսեանը կարդալու նախորդ տարուան Անդամական ընդհ. ժողովի ատենագրութիւնը:

Ատենագրութիւնը կարդացուելէն վերջ, Պրն. Երուանդ Շիշմանեան, առաջարկեց նիւթական տեղեկատուութեանց շարքին, աւելցնել նաեւ, հաշուեքննիչ Մարմնոյ տեղեկագրի պատճէնը, որուն երկրորդումովը առաջարկը ընդունուեցաւ եւ վաւերացուեցաւ: Պրն. Ե. Շիշմանեան, դարձեալ առաջարկեց նորընտիր Հոգեւոր Հովիւին պաշտօնի վաւերացումը, ընդհ. Անդամական ժողովիս կողմէ: Օրուան ատենապետ՝ Տոքթ. Ա. Կէօնմեան, պատշաճ բացատրութիւններ տալէ ետք, հովիւի ընտրութեան մասին, ծխ. Խորհուրդիս Ատենապետը խօսք առնելով հաղորդեց իր պաշտօնական հեռաձայնային խօսակցութիւնը Առաջնորդ Սրբազան Հօր հետ, ըստ որուն Հոգեւոր Հովիւը կը նշանակուի Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ եւ Թեմական Խորհուրդի հաւանութեամբ եւ տեղւոյն ծխական Խորհուրդիս համաձայնութեամբ: Մանաւանդ, մատնանը-շելով մեր Մահմանադրութեան 47րդ յօդուածը: Այսուհանդերձ, կան նաեւ հովիւի ընտրութեան պարագաներ, որոնցմէ մէկը այն է թէ՛ երբ համայնքի մը համար, մէկէ աւելի հովիւներ կը ներկայանան, անոնց ընտրութիւնը կ'ըլլայ ընդհ. Անդամական ժողովին կողմէ, որմէ ետք դարձեալ ընտրեալը կ'ենթարկուի Առաջնորդ Հօր եւ Թեմական Խորհուրդին վաւերացման: Եւ ժողովը, այս բացատրութիւններէն ետք, զոհացում գտաւ ու վաւերացուց նախորդ ժողովի ատենագրութիւնը:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆԷ:-

Նախկին Ատենապետներու Յանձնախումբին, Դպրաց Դասու, Շաբաթօրեայ վարժարանի, Եկեղեցասէր Տիկնանցի, Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբի եւ Բուրաստան ամսաթերթի տեղեկագրերը վաւերաց-ւեցան միասնաբար:

Շաբաթօրեայ վարժարանի խնամակալութեան ատենապետուհի Տիկին Էլտա Աքքիպրիթեանի մտահոգութեամբ, կարգ մը հարցեր դրուեցան Շաբաթօրեայ վարժարանի ուսումնական ծրագրին եւ անոր գործիչակերպին առնչութեամբ: Անգամ մը եւս կրկնուեցաւ, թէ Շաբաթօրեայ դպրոցը ենթակայ է տեղւոյս ծխ. Խորհուրդին եւ Հոգեւոր նախագահին, եւ անոնց միջոցաւ նիւ Եորթի Առաջնորդարանի եւ Ուսումնական Խորհուրդին:

Պրն. Ալպէր Մարտիկեան ժողովիս ուշադրութեանը հրաւիրեց Երիտասարդաց Յանձնախումբի չգոյութեան հարցը: Հոգեւոր նախագահը ըսաւ, թէ ամիս մը առաջ մօտէն հետաքրքրուած է այս հարցով եւ իր մօտ կանչած է Երիտասարդացի ատենապետը եւ ապա Երիտասարդացի գանձապահը խնդրելով անոնցմէ, տալ իրենց մտահոգութիւնները եւ ըստայնրմ գարկ տալ իրենց գործունէութեանց. այսուհանդերձ, Հայր Սուրբը դարձեալ խնդրեց գանձապահին, իրենց ունեցած հաշիւները բերել Եկեղեցի եւ ստուգել անոնց մասին: Անկանոն ելեւմուտքի հաշիւէ մը ետք, Հայր Սուրբը կը ստանայ միայն 454.00 տոլարի գումար մը, որ իր կարգին կը յանձնէ ծխ. Խորհուրդին: Արդարեւ, Երիտասարդացի ատենապետէն խնդրուեցաւ ժողովի կանչել Երիտասարդները, սակայն, ցայժմ անպատասխան կը մնայ: Բայց եւ այնպէս ծրագրած է մօտ ատենէն ձեռնարկել նորի մը կազմութեան:

Վերոյիշեալ բարոյական տեղեկագրութիւններէ վերջ, ժողովս ըզբաղեցաւ Հոգեւոր Հովիւի եւ ծխ. Խորհուրդի բարոյական տեղեկատուութեամբ: Գնահատանքով եւ ծափերով դիմաւորուեցան տարուած աշխատանքները ներկայ ժողովականներու լրիւ մասնակցութեամբ:

ՆԻՒԹԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ:--

Հաշուեքննիչ մարմնի տեղեկագիրը կարդաց Պրն. Պերճ Էսէն. տրուած ըլլալով Հաշուեքննիչ անդամներու տարած աշխատանքը եւ ի մասնաւորի Պրն. Անդրանիկ Հատրճեանի գործին մասին ունեցած հմտութիւնը, Եկեղեցւոյս հաշիւները նկատուեցան որպէս արդար եւ փրոֆեսիոնէլ գործ մը: Ժողովս գնահատանքով ընդունեց հաշուեքննիչ մարմնոյ համարատուութիւնը:

Կալուածոց Յանձնախումբի, որուն գործունէութեանց սահմանին մէջ կ'իյնայ Եկեղեցւոյս Պարտքի Եիջման հարցը - տեղեկագիրը արժանացաւ գնահատանքի. եւ Տոքթ. Յակոբ Գարակէօզեանի առաջարկով, Յանձնախումբի նուիրեալներէն Պրն. Կայծակ Օղիկեանի քսան տարիներու ծառայութիւնը ծափերով նշուեցաւ:

Հետզհետէ ժողովը վաւերացուց Կոմիտաս Դպրաց Դասու, տարած աշխատանքները ի մասնաւորի անոնց բերած նիւթական գործունէութիւնը Եկեղեցւոյս բարելաւման կապակցութեամբ:

Ժողովս դարձեալ, վաւերացուց Եկեղեցասէր Տիկնանց Յանձնախումբին տարած նուիրեալ եւ անխոնջ գործունէութիւնը, որոնց արդար եւ տքնաշան աշխատանքը գնահատուեցաւ, ըլլայ նիւթական եւ ըջլայ բարոյական տարուած աշխատանքներուն փոխարէն:

Ժողովս յաջորդաբար վաւերացուց Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբի եւ Բուրաստան ամսաթերթի նիւթական տեղեկատուութիւնները:

Տոքթ. Յակոբ Գաբակեօզեան առաջարկեց տրատու անդամներու, առանձնաշնորհեալ սակով մը ուղարկել Եկեղեցւոյս ամսաթերթը. ծխ. Խորհուրդի ատենապետ Պրն. Ա. Պասմաճեան հաղորդեց թէ Հոգեւոր Հովիւին հետ խորհրդակցաբար նկատի պիտի առնիւին մասնաւոր սակեր առաջադրել մեր Եկեղեցւոյ տրատու անդամներուն, զանազան խորհրդակատարութեանց եւ ծիսակատարութեանց վճարումներուն պարագային:

Անգամ մը եւս քննուեցան Հոգեւոր իշխանութեան եւ ծխ. Խորհուրդի ելեւմուտքի ու հաշուեյարհարի տեղեկատուութիւնները: Եղած հարցումներուն ի դիմաց, Եկեղեցւոյս ծխ. Խորհուրդի զանազան Պրն. Գէորգ Փելթեքեան տուաւ ճշգրիտ եւ զոհացուցիչ պատասխաններ, որուն համար ժողովս զնահատեց Պրն. Գանձապահը եւ զնահատութեամբ վաւերացուց տեղեկագրերը:

ՆԱՍԱՀԱՇԻՒ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ:-

1978 տարեշրջանի նիւթական նախատեսութիւնները ենթարկուեցան ժողովիս ստուգման եւ վաւերացման: Նկատելով հետզհետէ բարդուող եւ աճող ծախսերը, ժողովս յարմար դատեց տրամաբանական գետնի վրայ ընդունիլ ներկայացուած նախահաշիւը:

Առաջարկներու կարգին, Պրն. Ալպէր Մարտիկեան առաջարկեց բացատրութիւն ստանալ Պատգամաւորական ժողովի մեր ներկայացուցիչներէն, իրենց գործունէութեանց առնչութեամբ: Առաջարկի երկրորդումովը խնդրուեցաւ բանաձեւեր որդեգրել. Պրն. Ա. Մարտիկեանին առաջարկը, հակառակ իր օրինական սահմաններուն մէջ ըլլալուն, շրջան մը ելեկտրականացուց մթնոլորտը կենցաղագիտութեան պակասէն. մինչեւ իսկ Հոգեւոր նախագահը պարտաւորուեցաւ ի կարգ հրաւիրել խնդրարկուն, եր երբեմն օրինական սահմանները անտեսող արտայայտութեանց ձեւին համար: Այս առաջարկին առնչութեամբ, Հոգեւոր նախագահը տուաւ պատշաճ բացատրութիւններ, յիշեցնելով, թէ որեւէ առաջարկ Պատգամաւորական ժողովին ուղղարկուելէ առաջ, պէտք է ենթարկուի Ընդհ. ժողովին, որուն օրինականութիւնը պէտք է ամբողջացած ըլլայ, ինչպէս նաեւ կրնայ ընդհանուր եւ կամ մասնաւոր ժողովներ գումարուելի, երբ հարկը եր պահանջը զգացուի կամ այլպէս եւ Ընդհ. ժողովս կ'որոշէ:

Ընդունուեցաւ Պրն. Անդրանիկ Թադոսեանի բանաձեւը, թէ ծխական Խորհուրդը թող պարտականութիւն նկատէ յետ այսու Պատգամաւորական ժողովի պատշաճ եւ զաղուծս շահագրգռող հարցեր յանձնել անդամներու ուշադրութեան:

Պրն. Արա Կէրիբեան, Պատգամաւորական ժողովի անդամներէն բացատրութիւն պահանջեց, Գանատայի Առաջնորդական թեմի հարցին շուրջ, որուն ի զոհացում բացատրուեցաւ, թէ այս հարցը ժամանակաւորապէս առկախ կը մնայ, մինչեւ որ պատշաճ կարգադրութիւններ ըլլան Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի Առաջնորդ Սրբազան Հօր եւ Թեմական Խորհուրդի տնօրինած ուղղութիւններուն համաձայն:

Պրն. Հրայր Ժիհանեան առաջարկեց, որ յետ այսու Բուրաստան ամսաթերթի մէջ տեղ տրուին Հայաստանեայց Եկեղեցւոյ այժմէական հարցերուն, ինչպէս նաեւ եկեղեցա-ազգային նիւթեր, որով Եկեղեցւոյս բոլոր զաւակները գիտակ պահուին: Հոգեւոր նախագահը վստահեցուց թէ լոյս պիտի տեսնեն նման գրութիւններ:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՋԱՆԱԶԱՆՔ:-

Ժխական Խորհուրդս, նկատի առնելով եկեղեցւոյս նիւթական, կազմակերպչական հարցը, առաջրկեց Ընդհ. ժողովին, որ անդամատուրքերը աւելնան հետեւեալ ձեւով.

18-21 տարեկաններու, անձ գլուխ՝	15 տոլար
21-65 " " " "	25 " "
65 եւ վեր " " " "	15 " "

Առաջարկը ընդունուեցաւ եւ վաւերացուեցաւ հետեւեալ ձեւով.

18-21 տարեկաններու, անձ գլուխ՝	15 տոլար
21-65 " " " "	25 " "
65 եւ վեր " " " "	15 " "

Ժխական Խորհուրդոյ գանձապահ Պրն. Գ. Փելթեքեան Ընդհ. ժողովիս հաւանութիւնը խնդրեց, նախատեսեալ պիւտճէին մէջ ճշդուած շէնքի պահանման ծախսերուն համար, 25,000 տոլարի գումարի անբաւարարութեան պարագային, մինչեւ 35,000 կարենալ ծախսելու: Ժողովս, նկատի առնելով, ըստ պարագայի աւելցած ծախսերը, հաւանութիւն տուաւ եւ վաւերացուց:

Տոքթ. Յ. Գարակէօզեանի առաջարկով, ժողովս մասնաւոր գնահատական ելոյթ մը ունեցաւ Պրն. Վահէ Բէթլիի տարած աշխատանքներուն ի հաշիւ:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ:-

Ընտրողական Յանձնախումբի ատենապետ Պրն. Ե. Շիշմանեան հրաւիրուեցաւ ներկայացնելու իրենց աշխատութեանց արդիւնքը: Թեկնածուներու անունները կարդացուելէն վերջ Պրն. Անդրանիկ Հատրմեան առաջրկեց Ընտրողական Յանձնախումբի թեկնածուներուն ցանկին վրայ աւելցնել Պրն. Վահէ Բէթլիի անունը: Անառաջարկին երկրորդումովը ընթացք տրուեցաւ այս առաջարկին:

Ընտրութիւնները կատարուեցան 100 -հարիւր- տրատու անդամներու մասնակցութեամբ: Վերեւ յիշուած 102 անդամներէն երկուրը, ընտրութեան ժամանակէն առաջ մեկնեցան:

Երեկոյեան ժամը 9-ին, յետ մանրակրկիտ քննութեանց, կարելի եղաւ ստանալ ընտրութեանց արդիւնքները: Ստորեւ կուտանք անունները իրենց ստացած առաւելագոյն քուէի կարգով.

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ:-

1- Տոքթ. Արթօ Տէմիրճեան՝	82 քուէ
2- Պրն. Աւետիս Ժիհանեան՝	65 " "
3- Պրն. Վահէ Բէթլի՝	64 " "
4- Պրն. Երուանդ Շիշմանեան՝	60 " "
5- Տիկ. Անահիտ Գալայճեան՝	44 " "

ԺՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ:-

1- Պրն. Արթօ Պասմաճեան՝	87 " "
2- Տոքթ. Հրայր Տէր Գէորգեան՝	86 " "
3- Տոքթ. Յարութիւն Արզումանեան՝	81 քուէ
4- Պրն. Արա Կէրիքեան՝	51 " "

ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐ :-

- 1- Պրն. Վահէ Զէթլի՝ 78 քուէ
- 2- Տոքթ. Արշալիր Կէօնճեան՝ 77 ”
- 3- Տոքթ. Յարութիւն Արզումանեան 77 ”
- 4- Պրն. Լեւոն Գործեան՝ 71 ”

ՀԱՇՈՒՆՔՆՆԻՉ ՄԱՐՄԻՆ :-

- 1- Պրն. Անդրանիկ Զատրճեան՝ 73 ”
- 2- Պրն. Իվան Բրուտեան՝ 61 ”
- 3- Պրն. Հայկ Մարկոսեան՝ 56 ”

Հոգեւոր նախագահիս, Հոգ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեանի շնորհաւորութեան ու շնորհակալութեան խօսքերէն վերջ միասնաբար երգուած Տէրունական Աղօթքով վերջ գտաւ ժողովս, յետ միջօրէի ժամը 9.15-ին Փետրուար 12, 1978:



ՏՈՔԹ. ԱՐՇԱԻՐ ԿԵՕՆՃԵԱՆ
Ատենապետ

Արշակ Վրդ. Երէցեան
ՊԱՐԷՏ ՎՐԴ. ԵՐԷՑԵԱՆ
Նախագահ ժխական ժողովի

Արթուր Մկրտչեան
ՏԻԿ. Ս. ՏԷՐ ՕՀԱՆՆԷՍԵԱՆ
Ատենադպիր

Յակոբ Կարամանլեան
ՊՐՆ. ԺԻՐԱՅՐ ԱՅՎԱՏԵԱՆ
Ատենադպիր